ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-28-Ը ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Արմեն Սիմոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Վայրը՝ Ուզբեկստանի Հանրապետություն՝ ք. Տաշքենդ
   Ժամկետը՝ 2025 թվականի նոյեմբերի 26-28-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Հրավերը ստացվել է ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսից (համաստորագրված է նաև ԵՄ այլ հանձնակատարների կողմից) և Ուզբեկստանի Հանրապետության տրանսպորտի նախարար Իլխոմ Մախկամովից:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցություն «Տրանսկասպյան տրանսպորտային միջանցքի և կապի ներդրողների համաժողով»- ին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Համաժողովը հնարավորություն ընձեռեց տարբեր ձևաչափերով քննարկելու ՀՀ կառավարության ռազմավարական առաջնահերթությունները՝

- տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակում,
- «Խաղաղության խաչմերուկ» նախագծի ամբողջական իրականացում՝ այդ թվում TRIPP երթուղու գործարկում,
- Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք ուղղություններով տրանսպորտային կապակցվածությանը միտված ռազմավարական նախագծեր:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Երկկողմ հանդիպում եմ ունեցել Եվրոպական հանձնաժողովի շարժունակության և տրանսպորտի հարցերով գլխավոր տնօրինության (DG MOVE) գլխավոր վարչության քաղաքականության համակարգման և միջազգային հարաբերությունների բաժնի տնօրեն Մոնա Բյորկլյունդի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են՝

- Միջազգային տրանսպորտային միջանցքների (North-South, Black Sea connectivity) ինտեգրում
- ԵՄ ֆինանսական և խորհրդատվական գործիքների կիրառում
- Քաղաքային շարժունակության բարելավում
- Հասարակական տրանսպորտի արդիականացում
- ԵՄ ստանդարտների ներդրում
- Լոգիստիկա և բեռնափոխադրումներ
- Բեռնափոխադրումների թվայնացում
- Սահմանային անցակետերի բարելավում
- Կանոնակարգերի համապատասխանեցում ԵՄ պահանջներին

Համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ կառավարության կողմից նախաձեռնված ենթակառուցվածքային ծրագրերում ԵՄ ավելի ակտիվ ներգրավվածության հնարավորությունները: Մարթա Կոսը ողջունել է Հայաստանի կառավարության քայլերը տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման ուղղությամբ, ինչպես նաև ընդգծել Հայաստանի կարևորությունը ԵՄ կապակցման օրակարգում: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ՀՀ և ԵՄ միջև երկխոսության առանցքային մի շարք այլ հարցեր՝ շեշտելով համագործակցության ընդլայնման և առաջխաղացման հնարավորությունները տարբեր ոլորտներում:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համաժողովի արդյունքում ՀՀ կողմից փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համաժողովն ամփոփվեց Եվրոպական Միության (ԵՄ), Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրների, Թուրքիայի, միջազգային զարգացման բանկերի,

մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի և տարածաշրջանային գործընկերների կողմից համատեղ նպատակադրման ազդանշանով:

Ընդլայնման և Արևելյան հարևանության մասնակիցները վերահաստատեցին, որ Տրանսկասպյան տրանսպորտային միջանցքը «Եվրոպան և Ասիան կապող արագ, անվտանգ և հուսալի երթուղի է» և ընդգծեցին համակարգված գործողությունների անհրաժեշտությունը՝ առաջնահերթություն տալով հիմնական ներդրումներին՝ խոչընդոտները վերացնելու, կանոնակարգերը ներդաշնակեցնելու և ազդեցիկ ենթակառուցվածքները ընդլայնելու համար:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

12 դեկտեմբերի 2025թ.